ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

14.03.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Ա.Մատինյանը, Մ.Խեչումյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Բեջանյանը, Գ.Բաղդասարյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետը ներկայացրեց անցած ժամանակաշրջանում կատարված աշխատանքների վերաբերյալ իր դիտարկումները՝ տրված հանձնարարականների կատարման և տարբեր ոլորտներում կատարված աշխատանքների վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանը ներկայացրեց աշխատակազմի կողմից հայտարարված մրցույթների, դրանց դիմորդների, ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց՝ անցկացվող մրցույթների նկատմամբ հանձնաժողովի անդամների կողմից դրսևորել անաչառ վերաբերմունք և անհատական պատասխանատվություն կրել տվյալ ստորաբաժանումում կադրերի համալրման օրինական և արդարացի գործընթացի իրականացման նկատմամբ:

3. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ՝ Ս.Մակարյանը, Մ.Դալլաքյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Հակոբյանը, Մ.Խեչումյանը, Գ.Բաղդասարյանը ներկայացրեցին ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

4. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց առողջապահության ոլորտում իրականացված աշխատանքների, մասնավորապես՝ անակնկալ շրջայցերի և դրանց ընթացքում հայտնաբերված և արձանագրված թերությունների և առկա խնդիրների ու դրանց լուծման ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

5. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանը ներկայացրեց վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես նշեց, որ ԿԳՄՍ նախարարության կողմից անցկացված Մարզական միջոցառումների ամփոփման վարկանիշային մրցույթի ամփոփման արդյունքներով Լոռու մարզը հանրապետության մասշատաբով գրավել է 3-րդ տեղը և արժանացել 3 մլն դրամ դրամաշնորհ-մրցանակի, որի շրջանակներում պետք է ներկայացնել ուսումնական հաստատությունների համար անհրաժեշտ գույքի ցանկ:

Մարզպետը հանձնարարեց ուսումնասիրել ուսումնական հաստատությունների կարիքները և ներկայացնել առաջարկություններ գույքի ցանկի ներկայացման ուղղությամբ:

6. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ նշեց, որ ներկա դրությամբ ՀՀ ՏԿ և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 2025թ-ի համար նախատեսված 26 սուբվենցիոն ծրագրերի փաթեթներ, որոնք քննարկման և հաստատման փուլում են: Նա հայտնեց նաև, որ իրականացվում են շրջայցեր և մշտադիտարկումներ շինարարական օբյեկտներում:

Մարզպետը հանձնարարեց.

1) Շարունակել ամենօրյա հսկողությունը և աշխատանքների իրականացումը շինարարական ծրագրերի ներկայացման, մշտադիտարկումների արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման և դրանց վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ուղղությամբ:

2) Մարզի համայնքների աշխատակազմերի համապատասխան ներկայացուցիչների հետ ստեղծել հանձնաժողովներ, մշտադիտարկումներ իրականացնել 2023-2024թթ-ին իրականացված և ավարտված շինաշխատանքների նկատմամբ՝ ուսումնասիրելու և վերհանելու այն խնդիրները, որոնք առաջացել են շահագործման ընթացքում, պարզելու նպատակով դրանց առաջացման մեխանիզմը (արդյո՞ք երաշխիքային սպասարկման փուլում են գտնվում, թերություններն ու խնդիրներն առաջացել են շինարարների մեղքո՞վ, թե՝ սպասարկման ժամանակ սպասարկող անձնակազմի մեղքով), հետևողական լինել այդ խնդիրների վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների նկատմամբ և ներկայացնել տեղեկատվություն:

3) Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել համայնքներում բնակելի շենքերի բակերում ինքնակամ կառույցների հայտնաբերման, գույքագրման և օրենսդրությանը համաձայն դրանց հետագա ճակատագրի լուծման վերաբերյալ և ներկայացնել առաջարկություններ ու տեղեկատվություն:

4) Անհրաժեշտ հետևողական աշխատանքներ իրականացնել մարզի համայնքներում հայտարարվող հողերի մրցույթների և աճուրդ-վաճառքների գործընթացի նկատմամբ, ստուգել դրանց օրինականությունը, հիմնավորվածությունը, ժամկետների պահպանումը, որպեսզի հնարավորինս բացառվեն ձևական և անօրինական մրցույթները և աճուրդները:

7. Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ հայտնեց, որ ներկայումս շրջանառվում են Բուսաբուծության աջակցության 2025թ. և

Գյուղատնտեսության ոլորտի պարտադիր ապահովագրության ծրագրերի նախագծերը, որոնց վերաբերյալ տեղեկացվել են մարզի համայնքները:

9. Մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Ա.Մալոյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, միաժամանակ հայտնեց, որ լրամշակվել է Լոռու մարզպետարանի 2024թ. հաշվետվության սահիկաշարի նորացված տարբերակը:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99